Գելուտի առուն։ Ապա Թորդում եւ Օլթի առուակները միանում են, ուղղւում են հիւ-

---

պատապարանները յայտնի են, մանաւանդ Զուարթնոցը, իր բարդ ճարտարապետութեամբ։ Ինչպէս կան համաշխարհային պատմական եօթը հրաշալիքներ, Եգիպտոսի Պիրամիդներից սկսած, այդպէս էլ Ճորոխի Աւազանը իր եօթը հրաշակերտներն ունի, որոնցից մէկն էլ Իշխանքի այս տաճարն է։ Թէ սա Ներսէսի օրով եւ նրա ճաշակով է կառուցուած, բացի վերանորոգումները, կասկածները կ'անհետանան, եթէ ականատեսը մի առ մի բոլոր մանրամասնութիւնները գնէ։ Խախի (Թորդումի Խախի տաճարն է) հիմունքը եւ կամարների կազմը, Իշխանի Նախէրը (Դկարները) հրաշակերտ է համարուած։ Եօթը հրաշալիքն սկսում է Խախով, վերջանում է Իշխանով, որոց մէջ տեղ են գրաւում Օշկ, Օշնակ, Օթխա, Բանա տաճարները եւ Աբերնիսի դուռը։ Երբ առաջին անգամ 1873 թ. Իշխանում Մկրի հետ գնում էի Ղերսէսի ապարանքի ներքին օրմանկարները, մենտորս ասաց. — Մէկ վերն աչէ, վերն, տես ամբողջապէս ոսկեպատ է։ — Ինչ կայ որ, ասացի աչքերս առաստաղին յառած, մեր տան դահլիճի առաստաղն էլ ոսկեզօծ է։ — Ձեր դահլիճի ծաղիկների տակ ֆոյա է դրած, էն էլ պղնձի ֆոյա. հազար-հազար տարի առաջ ոսկի է բռնել, այնքան ծխից ու կեղտից յետոյ, զուտ ոսկին իր փայլը չի կորցրել։ Եւ ուրիշ, երբ երկար զննեցի, էլ աչքերս չէի կարող ցած բերել. այնքան որ գրաւիչ էին։ Երբ 1906 թ. Վենետիկ Դոժերի պալատի դահլիճի ոսկեզեղուն առաստաղը տեսայ, առաջնորդիս մօտեցայ եւ ասացի. — Իշխանքի ապարանքի առաստաղն յիշեցի, երբ տեսայ այս հսկայ դահլիճի առաստաղը. համանման ձեւ ունին, բայց սա նրանից 5—6 անգամ մեծ է։ Իսկ ոսկեզօծումը միատեսակ է։ Առաջնորդս կասկածեց եւ կասկածելու էլ իրաւունք ուներ. Ցայտի Իշխանք գեղում, մի աւերակ ապարանքում ոսկեզօծ առաստաղ։ 1916 թ. այդ դահլիճն ու ապարանքն խարտաղ կործանուած եւ հողի հետ հաւասարուած էին։

Սակայն Իշխանքի տաճարը իր նկարազարդով կայ եւ մնում է որպէս անկործան հրաշալիք Ցայտոց աշխարհի, որի գմբէթի, կամարների վրայ այնպիսի ներկ է բռնացրած,